

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014Թ.

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2014թ-ի հուլիսի 15-ին տեղի ունեցավ Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ղեկավարի 2014թ-ի 1-ին կիսամյակի հաշվետվությունը: Համայնքի ղեկավարի հաշվետվությանը մասնակցում էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար տիկին Փ.Կարապետյանը, Սարդարապատ համայնքի ավագանու անդամներ, ինչպես նաև համայնքի 120 բնակիչներ:

Նախապատրաստական աշխատանքներ էին կատարվում գյուղատնտեսական տարին սկսելու համար: «Արաքս» ՋՕԸ-ի հետ մաքարվում էին ոռոգման առուները, վերանորոգվում և տեղադրվում էին խորքային հորերը:

Ոռոգման ջուրը ստանալուց հետո ազգաբանակչությունը ամբողջովին զբաղվում է հողային աշխատանքներով:

Գյուղատնտեսական աշխատանքներին նպաստեցին պետության կողմից սուբսիդավորված ազոտական պարարտանյութի և դիզվառելիքի ներկրումը համայնք:

Սարդարապատ համայնք ներկրվեց 275 տոնա ազոտական պարարտանյութ, 8 տոնա ֆոսֆորական պարարտանյութ, 53000լիտր դիզվառելիք:

2014թ-ի վաղ գարունը գյուղացիները դիմավորեցին տհաճ ցրտահարությամբ, ինչը հետագայում պարզ դարձավ, որ վնասել էր ծիրանի ամբողջ բերքը, մասամբ՝ սալորի:

Գարնանից գյուղացիությունը զգուշացվել էր, որ տարին լինելու է սակավաջուր և արդեն իսկ «Արարս» ՋՕԸ –ի կողմից հուլիսից կիրառվում է ջրաշրջանառություն:

Անցյալ տարվա համեմատ այս տարի վերագործարկվել են վեց հատ խորքային հորեր, որոնք զգալիորեն քեթևացրել են ոռոգման ջրի պահանջը: Ներկայումս «Արարս» ՋՕԸ –ն հետ գյուղապետարանը կատարում է նախապատրաստական աշխատանքներ «Արասներ» կոչվող տարածքում ևս մեկ հատ խորքային հոր կահավորելու և վերագործակցելու համար:

Անցյալ տարվա համեմատ գյուղում մշակվում է 100 հա -ով ավել հողատարածքներ, ներկայումս շուրջ 220 հա հողատարածքներում ավարտվել է աշնանացան ցորենի և գարու բերքահավաքը, ստացվել է առատ և որակով բերք:

Ունենք բոստան- բանջարանոցային կուլտուրաների լավ դաշտեր, ընթացքի մեջ է բերքահավաքը:

Ցավոք, այս տարի էլ մեր բանջար-բոստանային կուլտուրաներ մշակող հողատերերը հանդիպեցին ևս մեկ դժվարության. ավելի քան

100 հա լոլիկի և սմբուկի դաշտերը վարակվել են ճրագախտով՝ ախտահարված պարագիտ մոլոխտով: Այս բույսի դեմ առայժմ պայքարի միջոց չկա: Մեր կողմից տեղյակ է պահվել Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսական բաժին: Գյուղ են այցելել բույսերի պաշտպանության կենտրոնից մասնագետներ, գյուղնախարարության աշխատակիցներ, կատարվել են փորձնական պայքար քիմիկատների միջոցով, սակայն դեռևս անարդյունք: Ներկա փուլում մարզպետի հանձնարարությամբ կատարվում է վարակված լոլիկի, սմբուկի դաշտերի գույքագրումը, որը մոտ օրերս ըստ հողատարածքների և հողատերերի կներկայացվի մարզպետարան:

Սարդարապատ համայնքից 175 խաղողատերերի և Երևանի կոնյակի գործարանի միջև կնքվել են պայամանագրեր:

Մայիսից վերաբացվեց գյուղի մանկապարտեզը երեք խմբերով, երեխաների հաճախելիությունը հասնում է մինչև 120-ի:

Փաստաթղթային աշխատանքներ են տարվում Հայաստանի Հանրապետության ջրային պետական կոմիտեի «Ասիական զարգացման» բանկի հետ՝ համայնքի խմելաջրերի ներքին ցանցի, ջրավազանների աշտարակների հիմնավերանորոգման համար: Համայնք են եկել Ջրային պետական կոմիտեի աշխատակիցներ,

տեղում ծանոթացել են խմելու ջրի վիճակին, կազմել են աշխատանքնային նախագծեր և, ի ուրախությամբ մեզ, վերջերս մեզ հայտնեցին, որ «Ասիական զարգացման» բանկը և Հայաստանի Հանրապետության ջրային պետական կոմիտեն համաձայնություն են տվել համայնքի խմելաջրերի ներքին ցանցը ամբողջովին վերակառուցելու համար:

Այսպիսով, ընթացքի մեջ է գտնվում համայնքի ներքին ցանցի հիմնանորոգման աշխատանքների հարցը:

Անցած վեց ամիսների ընթացքում կատարվել են դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, ավազապատման և խճապատման աշխատանքներ:

Անցած 6 ամիսների ընթացքում կայացվել է համայնքի ավագանու վեց նիստ, համայնքի ղեկավարի 25 որոշում, համայնքի մեկ ընդհանուր ժողով:

Գյուղապետարան տարբեր հարցերով դիմել են շուրջ 700 քաղաքացիներ: 2014թ-ի 1-ին կիսամյակում համայնքում ծնվել է 30 երեխա, մահացել՝ 32 մարդ: ՀՀ բանակ են զորակոչվել 33 զորակոչիկներ:

Սեփական եկամուտներից հավաքագրվել է 4615,7 հազար ՀՀ դրամ:

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ